

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 6

2012թ. հունիսի 6 -ին կայացած Երևանի պետական համալսարանի աշխարհագրության և Երկրաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի նիստի

Օրակարգ.

1. 2011/2012 ուստարվա 2-րդ կիսամյակի քննությունների ընթացքը ֆակուլտետում:
/Զեկ. Վ.Վարդանյան/
2. Ուսումնական և արտադրական պրակտիկաների կազմակերպման ընթացքը ֆակուլտետում:
/Զեկ. Ա.Գրիգորյան/
3. 2012/2013 ուստարվա ուսումնական աշխատանքային պլանների կազման ընթացքը:
/Զեկ. Թ.Վարդանյան/
4. Ֆակուլտետի գիտական խորհրդի կողմից տրվող ատենախոսական աշխատանքների եզրակացությունների հաստատում:
5. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ – Վ.Պ.Վարդանյանի հաղորդումը 2011/2012 ուստարվա 2-րդ կիսամյակի քննությունների ընթացքի վերաբերյալ: Վ.Վարդանյանը նշեց, որ ֆակուլտետում ավարտին է մոտենում քննաշրջանը, այն կավարտվի երկու շաբաթից և, պարզ կինեն քննությունների ընդհանուր արդյունքները: Կարելի է նշել, որ քննությունները անցնում են նախապես հաստատված ժամանակացույցով, հետաձգված քննությունները չկան, մինչ այժմ արդեն ավարտված քննությունների արդյունքները կարելի է գնահատել բավարար:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Ընդունել ի գիտություն Վ.Վարդանյանի հաղորդումը 2011/2012 ուստարվա 2-րդ կիսամյակի քննությունների ընթացքի վերաբերյալ:
2. Հանձնարարել արիոնի վարիչներին, որ քննությունների ընթացքը անցկացնելու պատշաճ մակարդակով:

ԼՍԵՑԻՆ – Ա.Թ.Գրիգորյանի հաղորդումը ֆակուլտետում ուսումնական և արտադրական պրակտիկաների կազմակերպման ընթացքի վերաբերյալ: Զեկուցողը նշեց, որ արդեն կազմված են ուսումնական պրակտիկաների գրաֆիկները և երթուղիները, հաստատված են դեկավարները: Ուսումնական պրակտիկան 1-ին կուրսի ուսանողները անց են կացնելու Բյուրականի ուսումնական հանգրվանում, ինչպես նաև Քարվաճառի տարածքում (2 օր)` դեկանի մասնակցությա «Մարմարիկ» ուսումնական հանգրվանում՝ հուլիսի 7-21-ը ընկած ժամանակահատվածում: Արտադրական պրակտիկաները անցկացվելու են հանրապետության համապատասխան կազմակերպություններում՝ համապատասխան ամբիոնների կողմից կազմված ծրագրերով և գրաֆիկներով:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն Ա.Գրիգորյանի հաղորդումը ֆակուլտետում ուսումնական և արտադրական պրակտիկաների կազմակերպման ընթացքի վերաբերյալ:

ԼՍԵՑԻՆ – Թ.Վարդանյանի հաղորդումը 2012/2013 ուստարվա ուսումնական աշխատանքային պլանների կազման ընթացքի վերաբերյալ: Զեկուցողը նշեց, որ ամբիոնների կողմից կազմված բակալավրիատի ուսումնական աշխատանքային պլաններն արդեն հաստատվել են համալսարանի ուսումնական վարչության կողմից, հաստատման ընթացքում են գտնվում նաև մագիստրատուրայի ուսումնական աշխատանքային պլանները:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն Թ.Վարդանյանի հաղորդումը 2012/2013 ուստարվա ուսումնական աշխատանքային պլանների կազման ընթացքի վերաբերյալ:

ԼՍԵՑԻՆ – Քարտեզագրության և գեռմորֆոլոգիայի ամբիոնի վարիչ Վ.Բոյնագրյանի հաղորդումը ամբիոնի հայցորդ Սամվելի Ավետիքի Նահապետյանի թեկնածուական ատենախոսության թեմայի վերնագրի փոփոխության վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ - Քարտեզագրության և գեռմորֆոլոգիայի ամբիոնի հայցորդ Սամվելի Ավետիքի Նահապետյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Երևան քաղաքի կոշտ կենցաղային թափոնների համակարգի համալիր էկոլոգիական ուսումնասիրություն և աշխարհատեղեկատվական նողելավորում» վերնագրով:

ԼՍԵՑԻՆ – Միներալոգիայի, պետրոլոգիայի և երկրաքիմիայի ամբիոնի հայցորդ Գայանե Մինասյանի գեկուցումը «Անան-Ամասիայի գոտու գերիխմքային-հիմքային ապարների պետրոգեն և հանքային տարրերի տեղաբաշխման վիճակագրական վերլուծությունը» թեմայով ԻԴ.24.02 - «Երկրաքիմիա, հանքավայրերի որոնման երկրաքիմիական մեթոդներ» մասնագիտությամբ երկրաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսական աշխատանքի վերաբերյալ:

Զեկուցողը մանրամասն կանգ առավ այն գիտական ձեռքբերումների վրա, որին նա հասել է ուսումնասիրությունների ժամանակ: Նա նշեց, որ աշխատանքի արդյունքները գեկուցվել են ամբիոնի նիստում, գիտական խորհրդի կողմից կազմակերպված սեմինարում:

Ելույթ ունեցավ ամբիոնի վարիչ Շ.Խաչատրյանը և նշեց, որ աշխատանքում հեղինակը հստակ ներկայացրել է ատենախոսության նպատակը, խնդիրները, գիտական նորույթները և իր կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքները:

ՈՐՈՇԵՑԻՆ – Միներալոգիայի, պետրոլոգիայի և երկրաքիմիայի ամբիոնի հայցորդ Գայանե Մինասյանի գեկուցումը «Անան-Ամասիայի գոտու գերիխմքային-հիմքային ապարների պետրոգեն և հանքային տարրերի տեղաբաշխման վիճակագրական վերլուծությունը» վերնագրով թեկնածուական ատենախոսությունը երաշխավորել հրապարակային պաշտպանության, և հաստատել աշխատանքի վերաբերյալ խորհրդի որոշումը:

ԼՍԵՑԻՆ – Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի հայցորդ Սասուն Բաղրամարյանի գեկուցումը «Լոռու մարզի բնական և անթրոպոգեն լանդշաֆտների վիճակի գնահատումը, դրանց բարելավման ուղիները» վերնագրով թեկնածուական ատենախոսության վերաբերյալ:

Զեկուցողը մանրամասն կանգ առավ այն գիտական ձեռքբերումների վրա, որին նա հասել է ուսումնասիրությունների ժամանակ, նշելով, որ աշխատանքի արդյունքները գեկուցվել են ամբիոնի նիստում, գիտական խորհրդի կողմից կազմակերպված սեմինարում:

Ելույթ ունեցավ ամբիոնի վարիչ Թ.Վարդանյանը և նշեց, որ հեղինակի կողմից շտկվել են նախորդ քննարկումների ժամանակ արված դիտողությունները: Հեղինակը հստակ ներկայացրել է ատենախոսության արդիականությունը, խնդիրները, գիտական նորույթները և իր կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքները: Աշխատանքն ունի կիրառական նշանակություն:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի հայցորդ Սասուն Բաղրամարյանի «Լոռու մարզի բնական և անթրոպոգեն լանդշաֆտների վիճակի գնահատումը, դրանց բարելավման ուղիները» վերնագրով թեկնածուական ատենախոսությունը երաշխավորել հրապարակային պաշտպանության, և հաստատել աշխատանքի վերաբերյալ խորհրդի որոշումը:

ԼՍԵՑԻՆ – Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի վարիչ Ա.Ավագյանի հաղորդումը ամբիոնի նախկին ասպիրանտ Ասպրամ Ղազարոսի Ասրյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «ՀՀ աշխարհագրական պայմանների գնահատումը տուրիզմի զարգացման տեսանկյունից» վերնագրով:

ՈՐՈՇԵՑԻՆ – Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի նախկին ասպիրանտ Ասպրամ Ղազարոսի Ասրյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «ՀՀ աշխարհագրական պայմանների գնահատումը տուրիզմի զարգացման տեսանկյունից» վերնագրով:

ԼՍԵՑԻՆ – Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի, սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի ամբիոնի ասպիրանտ Մասումե Հասանեժադի զեկուցումը «Իրանի Մազանդարան նահանգի արևմտյան հատվածի նախալեռնային և լեռնային ավանդական բնակավայրերի դերն ու նշանակությունը գյուղական տուրիզմի կայուն զարգացման գործում» վերնագրով թեկնածուական ատենախոսության վերաբերյալ:

Զեկուցուղի մանրամասն կանգ առավ այն գիտական ձեռքբերումների վրա, որին նա հասել է ուսումնասիրությունների ժամանակ, նշելով, որ աշխատանքի արդյունքները զեկուցվել են ամբիոնի նիստում, գիտական խորհրդի կողմից կազմակերպված սեմինարում:

Ելույթ ունեցավ ամբիոնի վարիչ Ա.Ավագյանը և նշեց, որ հեղինակի կողմից շտկվել են նախորդ քննարկումների ժամանակ արված դիտողությունները: Հեղինակը հստակ ներկայացրել է ատենախոսության արդիականությունը, խնդիրները, գիտական նորույթները և իր կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքները: Աշխատանքն ունի կիրառական նշանակություն:

ՈՐՈՇԵՑԻՆ – Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի, սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի ասպիրանտ Մասումե Հասանեժադի «Իրանի Մազանդարան նահանգի արևմտյան հատվածի նախալեռնային և լեռնային ավանդական բնակավայրերի դերն ու նշանակությունը գյուղական տուրիզմի կայուն զարգացման գործում» վերնագրով թեկնածուական ատենախոսությունը երաշխավորել հրապարակային պաշտպանության, և հաստատել աշխատանքի վերաբերյալ խորհրդի որոշումը:

ԼՍԵՑԻՆ – Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի, սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի ամբիոնի ասպիրանտ Ղորբան Խոսրավի զեկուցումը «Կասպից ծովի ավազանի աշխարհաքաղաքական քնութագիրը ռեգիոնալ անվտանգության առումով» վերնագրով թեկնածուական ատենախոսության վերաբերյալ:

Զեկուցուղի մանրամասն կանգ առավ այն գիտական ձեռքբերումների վրա, որին նա հասել է ուսումնասիրությունների ժամանակ, նշելով, որ աշխատանքի արդյունքները զեկուցվել են ամբիոնի նիստում, գիտական խորհրդի կողմից կազմակերպված սեմինարում:

Ելույթ ունեցավ ամբիոնի վարիչ Ա.Ավագյանը և նշեց, որ հեղինակի կողմից շտկվել են նախորդ քննարկումների ժամանակ արված դիտողությունները: Հեղինակը հստակ ներկայացրել է ատենախոսության արդիականությունը, խնդիրները, գիտական նորույթները և իր կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքները: Աշխատանքն ունի կիրառական նշանակություն:

ՈՐՈՇԵՑԻՆ – Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի, սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի ասպիրանտ Ղորբան Խոսրավի «Կասպից ծովի ավազանի աշխարհաքաղաքական քնութագիրը ռեգիոնալ անվտանգության առումով» վերնագրով թեկնածուական ատենախոսությունը երաշխավորել հրապարակային պաշտպանության, և հաստատել աշխատանքի վերաբերյալ խորհրդի որոշումը:

ԼՍԵՑԻՆ – Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի, Էկոլոգիական երկրաբիմիայի ամբիոնի ամբիոնի ասպիրանտ Ֆարիհանգ Ֆարահմանդի զեկուցումը «Թեհրան քաղաքի շրջակա տարածքի ստորերկրյա ջրերի քիմիական աղտոտման նվազեցման ուղղությամբ քնապահպանական միջոցառումների ուսումնասիրությունը» վերնագրով թեկնածուական ատենախոսության վերաբերյալ:

Զեկուցուղի մանրամասն կանգ առավ այն գիտական ձեռքբերումների վրա, որին նա հասել է ուսումնասիրությունների ժամանակ, նշելով, որ աշխատանքի արդյունքները զեկուցվել են ամբիոնի նիստում, գիտական խորհրդի կողմից կազմակերպված սեմինարում:

Ելույթ ունեցավ ամբիոնի վարիչ Գ.Փիլումյանը և նշեց, որ հեղինակի կողմից շտկվել են նախորդ քննարկումների ժամանակ արված դիտողությունները: Հեղինակը հստակ ներկայացրել է ատենախոսության արդիականությունը, խնդիրները, գիտական նորույթները և իր կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքները: Աշխատանքն ունի կիրառական նշանակություն:

ՈՐՈՇԵՑԻՆ – Իրանի Խալամական Հանրապետության քաղաքացի, սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի ասպիրանտ Ֆարիհանգ Ֆարահմանդի «Թեհրան քաղաքի շրջակա տարածքի ստորերկրյա ջրերի քիմիական աղտոտման նվազեցման ուղղությամբ բնապահպանական միջոցառումների ուսումնասիրությունը» վերնագրով թեկնածուական ատենախոսությունը երաշխավորել հրապարակային պաշտպանության, և հաստատել աշխատանքի վերաբերյալ խորհրդի որոշումը:

ԼՍԵՑԻՆ – Սոցիալ-տնտեսական ամբիոնի վարիչ Ա.Ավագյանի հաղորդումը ամբիոնի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող Անուշ Սմբատի Պետրոսյանի «Զբոսաշրջության զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով գրված աշխատանքի հրատարակման համար ֆակուլտետի գիտական խորհրդի երաշխավորություն առանալու վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ – Երաշխավորել սոցիալ-տնտեսական ամբիոնի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող Անուշ Սմբատի Պետրոսյանի «Զբոսաշրջության զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով գրված աշխատանքը հրատարակման:

ԼՍԵՑԻՆ – Սոցիալ-տնտեսական ամբիոնի վարիչ Ա.Ավագյանի հաղորդումը ամբիոնի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող Սոնա Հակոբի Հրաշինյանի «Սփյուռքում ազգային ինքնության պահպանման աշխարհագրական առանձնահատկությունների վերլուծություն» թեմայով գրված աշխատանքի հրատարակման համար ֆակուլտետի գիտական խորհրդի երաշխավորություն ստանալու վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ – Երաշխավորել սոցիալ-տնտեսական ամբիոնի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող Սոնա Հակոբի Հրաշինյանի «Սփյուռքում ազգային ինքնության պահպանման աշխարհագրական առանձնահատկությունների վերլուծություն» թեմայով գրված աշխատանքը հրատարակման:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Մ.Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ա.Ս.ՍԱՐԴԱՐՅԱՆ